

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՆՅ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՅ ՆԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱ-
ՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 սեպտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարոյթունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովհան-
նիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դա-
տարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվա-
ծների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մայիսի
17-ին Երևանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության եւ Չեխիայի
Նանրապետության միջեւ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման
մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի
Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու
վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 12.08.2010թ. ՆՏ
սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցող Ռ. Պապայանի գրավոր հաղորդումը,
Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ փարածքային

կառավարման նախարարության միգրացիոն ծառայության պետ Գ. Եզանյանի գրավոր բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Յ.**

1. Նամաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի մայիսի 17-ին՝ Երեւանում:

2. Նամաձայնագրի նպատակն է առանց թույլտվության բնակվող անձանց հեղինակումը՝ ապահովելով միջազգային պայմանագրերով եւ ազգային օրենսդրությամբ երաշխավորվող իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

3. Նամաձայնագրով Նայասպանի Նանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- փոխանցել անձնական փվյալներ, որոնք անհրաժեշտ են համաձայնագրի իրականացման համար, ինչպես նաեւ փրամադրել տեղեկություններ փոխանցած այդ փվյալների եւ դրանց միջոցով ձեռք բերած արդյունքների օգտագործման վերաբերյալ,

- տեղեկություններ փրամադրել իր օրենսդրությանը համապատասխան փվյալների ոչնչացման համար գործող ժամկետների մասին, ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն կանխելու համար փվյալների չարտոնված կամ պատահական օգտագործումը, դրանց կորուստը կամ չարտոնված կամ պատահական փոփոխումը կամ ոչնչացումը,

- համաձայնագրով նախատեսված դեպքերում կրել անձանց հեղինակումնան հետ կապված ծախսերը, պատշաճ կերպով իրականացնել անձանց հեղինակումը եւ փրանցումը՝ միջազգային իրավունքի եւ սովորությանին ընթացակարգերի համաձայն:

Նամաձայնագրով սահմանված են նաեւ այն ուժի մեջ մտնելու, կասեցնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ.**

1. 2010 թվականի մայիսի 17-ին Երեւանում ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության եւ Չեխիայի Նանրապետության միջեւ առանց թույլտվության

բնակվող անձանց հեղինդունման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2010 թվականի
ՍԴՈ-910